



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

30.06.2015թ

**Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ղ Ե Ր Ձ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Հարգարժան գորակոչիկներ

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ 2015 թվականի ամառային զորակոչիկապակցությամբ:

Բարեմաղթում եմ, որ բանակային տարիները դառնան Ձեր կենսագրության ամենաբացառիկ ու ինքնատիպ էջերը, նշանավորվեն բացառապես հաջողություններով և ուղեկցվեն հաստատուն խաղաղությամբ:

Լիահույս եմ, որ կանեք առավելագույն հնարավորը հայ զինվորի վեհ կոչմանը հավատարիմ մնալու համար:

Թո՛ղ որ, բոլոր ժամանակներում ամուր և անսասան մնան մեր հայրենիքի սահմանները՝ նպաստելով հայրենի պետականության առավել հզորացմանն ու մեր ժողովրդի շարունակական բարօրությանը:

Կրկին շնորհավորելով Ձեզ՝ մաղթում եմ բարեհաջող և արդյունավետ ծառայություն ու ցանկանում, որ այսուհետև ևս հայ ժողովրդի փառապանծ բանակն ունենա նորանոր նվաճումներ ու ձեռքբերումներ:

Հարգանքներով

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ